ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒ-ԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 13 մարտի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Դ. Անանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի հուլիսի 25-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև՝ եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը։

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2018 թվականի փետրվարի 14-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Քննության առարկա կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 2017 թվականի հուլիսի 25-ին՝ Երևանում, որի նպատակն է բացառել եկամուտների և գույքի կրկնակի հարկումը և այդպիսով նվազեցնել եկամտային և գույքային հարկերի հետ կապված խոչընդոտների բացասական ազդեցությունը միջազգային առևտրի և ներդրումների վրա, այդպիսով ստեղծելով բարենպաստ հարկային ռեժիմ, ինչպես նաև կանխատեսելի և կայուն հարկային դաշտ:

Կոնվենցիային կից ներկայացված է արձանագրություն, որը Կոնվենցիայի անբաժանելի մասն է:

Կոնվենցիայով սահմանվում են պայմանավորվող պետությունների ռեզիդենտ հանդիսացող անձանց՝ հարկման ենթակա գույքը և եկամուտների տեսակները, որոնցով պայմանավորված կողմերը պարտավորվում են ձեռնպահ մնալ մյուս կողմի ռեզիդենտ հանդիսացող անձանց ստացած այն եկամուտը կամ գույքը հարկելուց, որի հարկման իրավունքը Կոնվենցիայով վերապահված է համապատասխան մյուս պայմանավորվող կողմին և՝ ընդհակառակը:

2. Կոնվենցիայի համաձայն Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- չհարկել կամ հարկել նվազեցված դրույքաչափերով Իսրայելի Պետության ռեզիդենտների կողմից Հայաստանի Հանրապետությունում ստացված որոշ տեսակի եկամուտներ, մասնավորապես՝ անշարժ գույքից ստացվող եկամուտը (6-րդ հոդված), ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող շահույթը (7-րդ հոդված), շահաբաժիննե-

ը (10-րդ հոդված), տոկոսները (11-րդ հոդված), ռոյալթիները (12-րդ հոդված), գույքի արժեքի հավելաճը (13-րդ հոդված), վարձու աշխատանքից եկամուտը (14-րդ հոդված),

- բացառել կրկնակի հարկումը Կոնվենցիայի 23-րդ հոդվածին համապատասխան, մասնավորապես, երբ Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որոնք Կոնվենցիայի դրույթներին համապատասխան կարող են հարկվել Իսրայելում, ապա Հայաստանը թույլ է տալիս այդ ռեզիդենտի եկամտից գանձվող հարկից հանել Իսրայելում վճարված եկամտահարկին հավասար գումար, և այդ ռեզիդենտի գույքից գանձվող հարկից հանել Իսրայելում վճարված գույքահարկին հավասար գումար,

- բացառել խտրականությունը Կոնվենցիայի 24-րդ հոդվածին համապատասխան, մասնավորապես, Իսրայելի Պետության ազգային անձանց Հայաստանի Հանրապետությունում չենթարկել այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված չսահմանել որևէ պարտավորություն, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց միևնույն հանգամանքների դեպքում, մասնավորապես՝ կապված ռեզիդենտության հետ, ենթակա են կամ կարող են ենթակա լինել Հայաստանի ազգային անձինք,

- Իսրայելի Պետության իրավասու մարմնին ծանուցել Հայաստանի Հանրապետության հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին (Կոնվենցիայի 2-րդ հոդված, մաս 4),

- չհարկել Հայաստանի Հանրապետության համալսարանում, քոլեջում, դպրոցում կամ այլ հավատարմագրված ուսումնական հաստատությունում ուսուցման կամ հետազոտմամբ զբաղվելու նպատակով ժամանած Իսրայելի Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձի՝ ուսուցանման կամ հետազոտման համար տրվող վարձատրությունը՝ ՀՀ առաջին անգամ մուտք գործելու օրվանից երկու տարին չգերազանցող ժամանակահատվածով (հոդված 19),

- չհարկել Կոնվենցիայի 20-րդ հոդվածի «ա» և «բ» կետերով նախատեսված այն վճարումները կամ եկամուտները, որպիսիք Հայաստանի Հանրապետությունում բնակվելու, ուսանելու կամ մասնագիտանալու նպատակով ստացել են անմիջապես մինչև

Հայաստանի Հանրապետություն ժամանելը Իսրայելի Պետության ռեզիդենտ հանդիսացող ուսանողները կամ փորձնակները,

- Իսրայելի Պետության իրավասու մարմնին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն Կոնվենցիայի 26-րդ հոդվածի համաձայն, մասնավորապես, փոխանակել այնպիսի տեղեկատվություն, որն անհրաժեշտ է Կոնվենցիայով նախատեսված հարկերի վերաբերյալ ներպետական օրենքների կատարման համար, քանի դեռ հարկումը չի հակասում Կոնվենցիային,

- երաշխավորել, որ Կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կողմից ստացված ցանկացած տեղեկություն բացահայտվի միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են բոլոր տեսակի հարկերի գնահատման կամ գանձման, հարկադիր բռնագանձման կամ դատական հետապնդման, բողոքարկումների քննման, կամ վերը նշվածի վերահսկողության գործընթացներին, ինչպես նաև երաշխավորել, որ այդ անձինք կամ մարմինները տեղեկությունը կօգտագործեն միայն այդպիսի նպատակների համար (հոդված 26, կետ 2),

- թույլատրել նվազեցնել Իսրայելում հավելաճի մասին օրենքի համաձայն վճարված հարկի գումարը՝ կապված Իսրայելից արտագաղթի արդյունքում օտարելու հետ՝ Կոնվենցիայի 13-րդ հոդված 6-րդ կետի համաձայն (Արձանագրության 8-րդ կետ):

3. Կոնվենցիան ուժի մեջ է մտնում անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ավարտման մասին Կողմերի ծանուցումներից վերջինի ստացման օրվանից:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած վերոհիշյալ պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015թվականի փոփոխություններով) 13-րդ հոդվածի դրույթներին և միտված են միջազգային իրավունքի հիման վրա՝ պետությունների հետ բարիդրացիական և փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ու ամրապնդմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2017 թվականի հուլիսի 25-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև՝ եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

13 մարտի 2018 թվականի
ՍԴՈ-1405